



**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿՆԵՐ ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՊԵՏՐՈՍ ԵՎ ԱՆՆԱ
ՕՐՈՒՆՋԱՔՃԻԼՆԵՐԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ»
ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԽԱԿՍ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՊԵՏՐՈՍ ԵՒ ԱՆՆԱ ՕՐՈՒՆՋԱՔՃԻԼ,
ՈՐ Ի ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ, ԱՄՆ**

Միրելի Տեր եւ Տիկին Օրունջաքճիկ,

Բարձրեալ Տիրոջ կամքով այսօր ուրախ առիթն ունենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Վեհաբանի նուիրական այս յարկի ներքոյ ընդունել բարեպաշտ ամուլիդ եւ Մեր բարձր գնահատանքը բերել Ձեզ՝ հաւատաւոր Ձեր ոգու եւ ազգանուէր ու եկեղեցաշէն Ձեր արդիւնաւոր ծառայութեանց համար:

ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանի միջոցով քաջածանօթ ենք Ձեր աստուածահաճոյ գործերին: Տարիներ շարունակ Դուք գնահատելի մասնակցութիւն էք բերում ամերիկահայութեան կեանքին, ազնիւ բարերարութիւններով սատարում ազգային հաստատութիւնների, Տիրախնամ թեմի եւ Պոլսահայ Միութեան կողմից իրականացուող ծրագրերին: Ազգային մեր կեանքը եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին աշխոյժ ու կազմակերպուած, միշտ շէն ու պայծառ տեսնելու նախանձախնդրութիւնը եւ զոհողութեան պատրաստականութիւնը ճանաչում ու յարգանք են բերել Ձեզ, ինչին Մենք գոհունակութեամբ հաղորդ դարձանք Արեւմտեան թեմ կատարած Հովուապետական Մեր վերջին այցելութեան ընթացքին:

Մեր գնահատանքն ենք բերում Ձեզ նաև Ձեր ջերմ զգացումների ու որդիական սիրոյ համար՝ հանդէպ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Սուրբ Էջմիածնին կատարած Ձեր ազնիւ նուիրատուութիւնը մեծապէս պիտի նպաստի Քրիստոսահիմն եւ լուսաւորչապսակ Մայր Աթոռի շինութեանն ու պայծառութեանը, Հայրենի մեր երկրում հոգեւոր կեանքի վերագարթօնքին: Գոհարանական աղօթքն է Մեր հոգում, որ ազգս հայոց օրհնուած է Ձեզ պէս բարեգործ զաւակներով, ովքեր միշտ պատրաստակամ են իրենց օգտակարութիւնը եւ հնարաւոր աջակցութիւնը բերելու մեր ժողովրդին եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն:

Ձեր հաւատաւոր, ազգասէր ու հայրենասէր ոգու եւ ազգային-եկեղեցական մեր կեանքում Ձեր իրագործումների բարձր գնահատանքով, սիրով ընդառաջ թեմակալ ձեր առաջնորդի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Ի Ո Ր Ի Չ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջեւ Մեր աղօթքն ենք բարձրացնում առ Ամենախնամն Աստուած՝ հայցելով, որ Տէրը Ձեր կեանքը օրհնի երկնատուր բարիքներով եւ գործոց յարանորոգ յաջողութիւններով՝ Իր օրհնութեան ներքոյ քաջառողջ ու կենսութալի պահպանելով Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 1-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2006 եւ ի թուին հայոց ՌՆԾԵ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 355